

**ՄԱՍ 3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործընթացն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգի շրջանակում:

- 1) Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ստորաբաժանումների տեղային համակարգչային ցանցի արդիականացման, առանձնացված ստորաբաժանումների՝ համակարգչային սարքավորումներով, ծրագրային փաթեթներով և մոդեմային կապով հանդերձավորման, կորպորատիվ ցանցի կառուցման աշխատանքների շարունակականության ապահովում:
- 2) Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային [www.armstat.am](http://www.armstat.am) կայքի, <http://docs.armstat.am/nsdp> (<http://docs.armstat.info/nsdp>) ինտերնետային էջի, ինչպես նաև ներքին ծառայողական ինտրանետային կայքի արդիականացման աշխատանքների շարունակում՝ նախադրյալներ ստեղծելով նաև Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջև ժամանակի իրական ռեժիմում գործող տեղեկատվության փոխանցման էլեկտրոնային կայքի (էքստրանետ) գործարկման համար:
- 3) վիճակագրական տվյալների և մեթատվյալների կորպորատիվ հիմնապաշարների ստեղծում, ինչը ներառելու է հրապարակվող վիճակագրական ցուցանիշների ողջ ցանկը՝ հաստատուն տվյալների տեսքով:
- 4) Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի տեղեկատվական անվտանգության և անխափան գործունեության ապահովման աշխատանքների շարունակում, ապահովելով նաև՝ վիճակագրական գաղտնիք հանդիսացող տվյալների անանությունը և անվանազերծումը:
- 5) վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից, վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններից և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալություններից էլեկտրոնային փաստաթղթերի միջոցով վիճակագրական տվյալների ստացման համակարգի և վիճակագրական տեղեկատվության սպառողների հետ ինտերակտիվ շփման համակարգի ձևավորում: